ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2016
02.2016
03.2016
04.2016
Ապրիլ
05.2016
06.2016
07.2016
08.2016
09.2016
10.2016
11.2016
12.2016

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 23-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2016

Ապրիլ

թիվ 4 (212)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները որոշ ՍՊԸ-ների արտարժույթի փոխանակման կետերի և գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Ինեկոբանկ» և «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ների միացման պայմանագիրը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Արարատբանկ» ԲԲԸ-ի «Շենգավիթ - 1» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի «Ապարան» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 6 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 7 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 35-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 36-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 15-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 37-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 16-ի թիվ 422-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 38-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

21 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 40-Ն որոշումը ««Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 43-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի փետրվարի 16-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

48 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Արբումպրոմ» ԱՄ և «Փեթակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «Մուվ Մեդ» և «Ֆինանսական շտապօգնություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 53Ա, 58Ա, 55Ա, 62Ա):
- ***Հաստատվել և գրանցվել է*** «Ինեկոբանկ» (պահպանվող բանկ) և «ՊրոԿրեդիտ բանկ» (միացող բանկ) փակ բաժնետիրական ընկերությունների միացման պայմանագիրը (որոշում թիվ 68Ա):
- ***Թույլատրվել է*** «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության «Շենգավիթ-1» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/279Ա):
- ***Գրանցվել է*** «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Ապարան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/282Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 6 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1455000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/208Ա, 1/220Ա, 1/221Ա, 1/246Ա, 1/257Ա, 1/273Ա) և 7 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/226Ա, 1/227Ա, 1/254Ա-1/256Ա, 1/271Ա, 1/272Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերի կողմից վարվող ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգում ներառվող տեղեկությունները համապատասխանեցնել օրենսդրական փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, 9-րդ հոդվածի 8-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման» կարգը հաստատելու մասին» թիվ 261-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կողմից ավանդների և ավանդատուների վերաբերյալ տեղեկատվական էլեկտրոնային համակարգի վարման, տվյալների պահպանման, երաշխավորված ավանդների հատուցման ենթակա գումարների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրման վերաբերյալ» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

1) Կարգը լրացնել նոր 1.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «1.3. Սույն կարգի իմաստով խնդրահարույց պարտավորություն է համարվում հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ ավանդատուի՝ բանկի նկատմամբ ունեցած այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումը ուշացել է պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:»,

2) Կարգի 3.1 կետում, Հավելված 1-ի «Պարտավորության տեսակը» աղյուսակի վերնագրում և աղյուսակի 2-րդ սյունակի 1-ին տողում, Հավելված 2-ում «պարտավորություն» բառն իր համապատասխան հոլովաձևերով փոխարինել «խնդրահարույց պարտավորություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

3) Կարգի 3.1 կետում «3. Բանկի նկատմամբ ավանդատուի պահանջներ» աղյուսակը լրացնել նոր տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

Միացման ամսաթիվ	Լրացվում է բանկին՝ մեկ այլ բանկի միանալու դեպքում միացման պայմանագիրն օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու ամսաթիվը	օժանդակ
Միացող բանկի կոդը	Լրացվում է միացող բանկի հնգանիշ կոդը	օժանդակ
Մարման ամսաթիվ	Լրացվում է բանկերի միացման արդյունքում ձևավորված ժամկետային բանկային ավանդի պայմանագրի ժամկետի ավարտի ամսաթիվը	օժանդակ

»,

4) Կարգի Հավելված 2-ը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «5. Եթե բանկում ավանդատուի ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միանալու դեպքում, ապա բանկը տվյալ ավանդատուի երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարի հաշվարկը կատարելիս յուրաքանչյուր միացող բանկում տվյալ ավանդատուին պատկանող բոլոր ավանդները դիտում է որպես առանձին բանկային ավանդ: Ընդ որում՝ միացման արդյունքում ձևավորված ժամկետային ավանդների գծով բանկը երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկում է առանձին՝ մինչև ավանդի պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը, իսկ ցպահանջ կամ ժամկետային ավանդից բացի ավանդի ժամկետի վերաբերյալ այլ պայմա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մարտի 4-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.04.2016 թ. (ՀՀԳՏ N9 (552), 15.04.2016):

նով ավանդների գծով՝ միացման պայմանագիրն օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կողմից հաստատվելու և գրանցվելու պահից մեկ տարվա ընթացքում: Սահմանված մեկ տարին կամ ավանդի պայմանագրով սահմանված ժամկետը լրանալու պահից այդ ավանդները դիտվում են որպես մեկ ավանդ, և բանկում միևնույն ավանդատուին պատկանող բոլոր ավանդների գծով հաշվարկվող երաշխավորված ավանդի հատուցման գումարը հաշվարկվում է սույն կարգի հավելված 2-ի 2-րդ կետի համաձայն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
11 մարտի 2016 թ., N 35-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 15-ի թիվ 116-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին ավանդատուներին հանձնվող ծանուցման օրինակելի ձևը համապատասխանեցնել օրենսդրական փոփոխություններին,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 15-ի «Ավանդատուներին ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին հանձնվող ծանուցման օրինակելի ձևը հաստատելու մասինե թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին» ծանուցման մեջ (այսուհետ՝ Ծանուցում) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Ծանուցման մեջ «Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը» վերնագրի ներքո.

ա. 2-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:»,

բ. «Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:» պարբերությունը փոխարինել հետևյալ պարբերությամբ.

«Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումը ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի»,

2) Ծանուցման մեջ «Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները» վերնագրից հետո առաջին և երկրորդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ

11 մարտի 2016 թ., N 36-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մարտի 4-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.04.2016 թ. (ՀՀԳՏ N9 (552), 15.04.2016):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 16-ի թիվ 422-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության լրացման կարգը,

հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 16-ի «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման կարգը» հաստատելու մասին թիվ 422-Ն որոշմամբ հաստատված «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կարգի 2.1 կետի «ա» ենթակետում, 2.2 և 3.1 կետերում՝ բոլոր «տեղեկանք» բառերը իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «հաշվետվություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով,
2) Կարգի 2.1 կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հիմնադրամի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:»,

3) Կարգը լրացնել նոր 2.8, 2.8.1, 2.8.2 և 2.8.3 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.8. Հիմնադրամը սույն կարգի 2.1 կետի «ա» ենթակետով սահմանված Հիմնադրամի միջոցների վերաբերյալ հաշվետվությունը լրացնելիս տվյալները ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

2.8.1. Հաշվետվության աղյուսակների՝

1) «Եկամտաբերությունը (%)» սյունակում ներկայացվում է միջին կշռված եկամտաբերությունը,
2) «Ժամկետայնությունը (օր)» սյունակում ներկայացվում է միջին կշռված ժամկետայնությունը,
3) «Կշիռը (%)» սյունակում ներկայացվում է իրականացված ներդրումների կշիռը:

2.8.2. Հաշվետվության 2-րդ, 2.1-րդ և 2.2-րդ աղյուսակներում ներկայացվում են Հիմնադրամի ընթացիկ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելու նպատակով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված իրացվելի պայուսակին առնչվող տեղեկությունները:

Հաշվետվության 3-րդ, 3.1-րդ և 3.2-րդ աղյուսակներում ներկայացվում են Հիմնադրամի միջոցների՝ բացառությամբ Հիմնադրամի ընթացիկ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի իրականացման համար անհրաժեշտ միջոցների, կառավարման նպատակով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված ներդրումային պայուսակին առնչվող տեղեկությունները:

Հաշվետվության 2-րդ, 2.1-րդ, 2.2-րդ, 3-րդ, 3.1-րդ և 3.2-րդ աղյուսակների 2-րդ և 3-րդ տողերը և ենթատողերը լրացվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից համապատասխան ուղենիշների սահմանված լինելու դեպքում:

2.8.3. Հաշվետվության Աղյուսակ 4-ում.

1) «Վարկանիշ (առկայության դեպքում)» սյունակում լրացվում է այն կազմակերպության վարկանիշը, որի ֆինանսական գործիքներում Հիմնադրամը ներդրում է կատարել,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 4-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.04.2016 թ. (ՀՀՊՏ N9 (552), 15.04.2016):

2) «Ժամկետ» (առկայության դեպքում) սյունակում լրացվում է վարկանիշի տրման ամսաթիվը,
3) «Վարկանիշ շնորհած կազմակերպություն» (առկայության դեպքում) սյունակում լրացվում է այն կազմակերպության անվանումը, որը վարկանիշ է շնորհել Հիմնադրամի կողմից ներդրում իրականացրած կազմակերպությանը:»:
4) Կարգի 3.4.1 կետն ուժը կորցրած ճանաչել:
5) Կարգի Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
11 մարտի 2016 թ., N 37-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի մարտի 4-ի թիվ 37-Ն որոշմամբ

«Հավելված 1. «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման» կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(եռամսյակային)

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

Աղյուսակ 1. Հիմնադրամի միջոցների շարժը

(հազար դրամ)

1	**Հիմնադրամի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի սկզբին**	
	որից՝ մասհանումներ գործառնական, վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նպատակներով	
2	**Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված երաշխիքային վճարներ (2.1+2.2+2.3), այդ թվում՝**	
2.1	պարտադիր երաշխիքային վճարներ	
2.2	լրացուցիչ երաշխիքային վճարներ	
2.3	միանվագ երաշխիքային վճարներ	
3	**Այլ մուտքեր (3.1+3.2+3.3+3.4), այդ թվում՝**	
3.1	միջոցների կառավարումից ստացված եկամուտներ	
3.2	նախկինում հատուցած գումարների ստացում բանկերից	
3.3	վարկեր և փոխառություններ	
3.4	այլ եկամուտներ և միջոցներ	
4	**Հատուցման հետ կապված ծախսեր (4.1+4.2), այդ թվում՝**	
4.1	հատուցված գումարներ	
4.2	հատուցման հետ կապված այլ ծախսեր	
5	**Գործառնական, վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների գծով կատարված վճարներ**	
6	**Հիմնադրամի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի վերջում (1+2+3-4-5)**	
7	**Բանկերի կողմից ուշացված վճարումներ**	
8	**Բանկերի կողմից չկատարված վճարումներ**	

Աղյուսակ 2. Ներդրումային պայուսակի ընդհանուր նկարագիրը

N		Ծավալ (հազար դրամ)	եկամտաբերություն (%)	ժամկետայնություն (օր)	Կշիռ (%)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Փաստացի ներդրումային պայուսակ (1.1+1.2), այդ թվում՝**				
1.1	դրամային ներդրումներ				
1.2	արտարժութային ներդրումներ				
2	**Ուղենշային ներդրումային պայուսակ (2.1+2.2), այդ թվում՝**				
2.1	դրամային ներդրումներ				
2.2	արտարժութային ներդրումներ				
3	**Ներդրումային պայուսակի շեղումը (3.1+3.2)**				
3.1	դրամային ներդրումներ (1.1-2.1)				
3.2	արտարժութային ներդրումներ (1.2-2.2)				

Աղյուսակ 2.1. ՀՀ դրամով ներդրումային պայուսակի նկարագիր

N		Ծավալ (հազար դրամ)	եկամտաբերություն (%)	ժամկետայնություն (օր)	Կշիռ (%)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Փաստացի ներդրված գումարներ, այդ թվում՝**				
1.1	ՀՀ պետական արժեթղթերում				
1.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
1.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				
1.6	Ռեպո				
1.7	Սվոփ				
1.8					
1.9					
1.10					
2	**Ուղենշային ներդրումային պայուսակ, այդ թվում՝**				
2.1	ՀՀ պետական արժեթղթերում				
2.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
2.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				
2.6	Ռեպո				
2.7	Սվոփ				
2.8					
2.9					
2.10					
3	**Շեղումը, այդ թվում՝**				
3.1	ՀՀ պետական արժեթղթերում (1.1-2.1)				
3.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում (1.2-2.2)				
3.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում (1.3-2.3)				
3.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում (1.4-2.4)				
3.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում (1.5-2.5)				
3.6	Ռեպո (1.6-2.6)				
3.7	Սվոփ (1.7-2.7)				
3.8					
3.9					
3.10					

Աղյուսակ 2.2. Արտարժույթով ներդրումային պայուսակի նկարագիր

N		Ծավալ (հազար դրամ)	եկամտաբերություն (%)	ժամկետայնություն (օր)	կշիռ (%)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Փաստացի ներդրված գումարներ, այդ թվում՝**				
1.1	ՀՀ պետական արժեթղթերում				
1.1.1	ԱՄՆ դոլար				
1.1.2	Եվրո				
1.1.3	Այլ				
1.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.2.1	ԱՄՆ դոլար				
1.2.2	Եվրո				
1.2.3	Այլ				
1.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.3.1	ԱՄՆ դոլար				
1.3.2	Եվրո				
1.3.3	Այլ				
1.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
1.4.1	ԱՄՆ դոլար				
1.4.2	Եվրո				
1.4.3	Այլ				
1.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				
1.5.1	ԱՄՆ դոլար				
1.5.2	Եվրո				
1.5.3	Այլ				
1.6	Ռեպո				
1.6.1	ԱՄՆ դոլար				
1.6.2	Եվրո				
1.6.3	Այլ				
1.7	Սվոփ				
1.7.1	ԱՄՆ դոլար				
1.7.2	Եվրո				
1.7.3	Այլ				
1.8					
1.8.1	ԱՄՆ դոլար				
1.8.2	Եվրո				
1.8.3	Այլ				
1.9					
1.9.1	ԱՄՆ դոլար				
1.9.2	Եվրո				
1.9.3	Այլ				
1.10					
1.10.1	ԱՄՆ դոլար				
1.10.2	Եվրո				
1.10.3	Այլ				
2	**Ուղենշային ներդրումային պայուսակ, այդ թվում՝**				
2.1	ՀՀ պետական արժեթղթերում				
2.1.1	ԱՄՆ դոլար				
2.1.2	Եվրո				
2.1.3	Այլ				
2.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.2.1	ԱՄՆ դոլար				
2.2.2	Եվրո				
2.2.3	Այլ				
2.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.3.1	ԱՄՆ դոլար				
2.3.2	Եվրո				
2.3.3	Այլ				
2.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
2.4.1	ԱՄՆ դոլար				
2.4.2	Եվրո				
2.4.3	Այլ				
2.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				

2.5.1	ԱՄՆ դոլար				
2.5.2	Եվրո				
2.5.3	Այլ				
2.6	Ռեպո				
2.6.1	ԱՄՆ դոլար				
2.6.2	Եվրո				
2.6.3	Այլ				
2.7	Սվոփ				
2.7.1	ԱՄՆ դոլար				
2.7.2	Եվրո				
2.7.3	Այլ				
2.8					
2.8.1	ԱՄՆ դոլար				
2.8.2	Եվրո				
2.8.3	Այլ				
2.9					
2.9.1	ԱՄՆ դոլար				
2.9.2	Եվրո				
2.9.3	Այլ				
2.10					
2.10.1	ԱՄՆ դոլար				
2.10.2	Եվրո				
2.10.3	Այլ				
3	**Շեղումը, այդ թվում՝**				
3.1	ՀՀ պետական արժեթղթերում (1.1-2.1)				
3.1.1	ԱՄՆ դոլար				
3.1.2	Եվրո				
3.1.3	Այլ				
3.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում (1.2-2.2)				
3.2.1	ԱՄՆ դոլար				
3.2.2	Եվրո				
3.2.3	Այլ				
3.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում (1.3-2.3)				
3.3.1	ԱՄՆ դոլար				
3.3.2	Եվրո				
3.3.3	Այլ				
3.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում (1.4-2.4)				
3.4.1	ԱՄՆ դոլար				
3.4.2	Եվրո				
3.4.3	Այլ				
3.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում (1.5-2.5)				
3.5.1	ԱՄՆ դոլար				
3.5.2	Եվրո				
3.5.3	Այլ				
3.6	Ռեպո (1.6-2.6)				
3.6.1	ԱՄՆ դոլար				
3.6.2	Եվրո				
3.6.3	Այլ				
3.7	Սվոփ (1.7-2.7)				
3.7.1	ԱՄՆ դոլար				
3.7.2	Եվրո				
3.7.3	Այլ				
3.8					
3.8.1	ԱՄՆ դոլար				
3.8.2	Եվրո				
3.8.3	Այլ				
3.9					
3.9.1	ԱՄՆ դոլար				
3.9.2	Եվրո				
3.9.3	Այլ				
3.10					
3.10.1	ԱՄՆ դոլար				
3.10.2	Եվրո				
3.10.3	Այլ				

Աղյուսակ 3. Իրացվելի պայուսակի ընդհանուր նկարագիր

N		Ծավալ (հազար դրամ)	Եկամտաբերություն (%)	Ժամկետայնություն (օր)	Կշիռ (%)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Փաստացի իրացվելի պայուսակ (1.1+1.2), այդ թվում՝**				
1.1	դրամային ներդրումներ				
1.2	արտարժութային ներդրումներ				
2	**Ուղենշային իրացվելի պայուսակ (2.1+2.2), այդ թվում՝**				
2.1	դրամային ներդրումներ				
2.2	արտարժութային ներդրումներ				
3	**Իրացվելի պայուսակի շեղումը (3.1+3.2)**				
3.1	դրամային ներդրումներ (2.1-1.1)				
3.2	արտարժութային ներդրումներ (2.2-1.2)				

Աղյուսակ 3.1. Իրացվելի պայուսակի ՀՀ դրամով միջոցների նկարագիր

N		Ծավալ (հազար դրամ)	Եկամտաբերություն (%)	Ժամկետայնություն (օր)	Կշիռ (%)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	**Փաստացի ներդրված գումարներ, այդ թվում՝**				
1.1	ՀՀ պետական արժեթղթերում				
1.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
1.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				
1.6	Ռեպո				
1.7	Սվոփ				
1.8					
1.9					
1.10					
2	**Ուղենշային իրացվելի միջոցներ, այդ թվում՝**				
2.1	ՀՀ պետական արժեթղթերում				
2.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
2.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				
2.6	Ռեպո				
2.7	Սվոփ				
2.8					
2.9					
2.10					
3	**Շեղումը, այդ թվում՝**				
3.1	ՀՀ պետական արժեթղթերում (1.1-2.1)				
3.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում (1.2-2.2)				
3.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում (1.3-2.3)				
3.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում (1.4-2.4)				
3.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում (1.5-2.5)				
3.6	Ռեպո (1.6-2.6)				
3.7	Սվոփ (1.7-2.7)				
3.8					
3.9					
3.10					

Աղյուսակ 3.2. Իրացվելի պայուսակի արտարժութային միջոցների նկարագիր

N		Ծավալ (հազար դրամ)	Եկամտաբերություն (%)	Ժամկետայնություն (օր)	Կշիռ (%)
1	2	3	4	5	6
1	**Փաստացի ներդրված գումարներ, այդ թվում՝**				
1.1	ՀՀ պետական արժեթղթերում				
1.1.1	ԱՄՆ դոլար				
1.1.2	Եվրո				
1.1.3	Այլ				
1.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.2.1	ԱՄՆ դոլար				
1.2.2	Եվրո				
1.2.3	Այլ				
1.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
1.3.1	ԱՄՆ դոլար				
1.3.2	Եվրո				
1.3.3	Այլ				
1.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
1.4.1	ԱՄՆ դոլար				
1.4.2	Եվրո				
1.4.3	Այլ				
1.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				
1.5.1	ԱՄՆ դոլար				
1.5.2	Եվրո				
1.5.3	Այլ				
1.6	Ռեպո				
1.6.1	ԱՄՆ դոլար				
1.6.2	Եվրո				
1.6.3	Այլ				
1.7	Սվոփ				
1.7.1	ԱՄՆ դոլար				
1.7.2	Եվրո				
1.7.3	Այլ				
1.8					
1.8.1	ԱՄՆ դոլար				
1.8.2	Եվրո				
1.8.3	Այլ				
1.9					
1.9.1	ԱՄՆ դոլար				
1.9.2	Եվրո				
1.9.3	Այլ				
1.10					
1.10.1	ԱՄՆ դոլար				
1.10.2	Եվրո				
1.10.3	Այլ				
2	**Ուղենշային իրացվելի միջոցներ, այդ թվում՝**				
2.1	ՀՀ պետական արժեթղթերում				
2.1.1	ԱՄՆ դոլար				
2.1.2	Եվրո				
2.1.3	Այլ				
2.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.2.1	ԱՄՆ դոլար				
2.2.2	Եվրո				
2.2.3	Այլ				
2.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում				
2.3.1	ԱՄՆ դոլար				
2.3.2	Եվրո				
2.3.3	Այլ				
2.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում				
2.4.1	ԱՄՆ դոլար				
2.4.2	Եվրո				
2.4.3	Այլ				
2.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում				

2.5.1	ԱՄՆ դոլար				
2.5.2	Եվրո				
2.5.3	Այլ				
2.6	Ռեպո				
2.6.1	ԱՄՆ դոլար				
2.6.2	Եվրո				
2.6.3	Այլ				
2.7	Սվոփ				
2.7.1	ԱՄՆ դոլար				
2.7.2	Եվրո				
2.7.3	Այլ				
2.8					
2.8.1	ԱՄՆ դոլար				
2.8.2	Եվրո				
2.8.3	Այլ				
2.9					
2.9.1	ԱՄՆ դոլար				
2.9.2	Եվրո				
2.9.3	Այլ				
2.10					
2.10.1	ԱՄՆ դոլար				
2.10.2	Եվրո				
2.10.3	Այլ				
3	**Շեղումը, այդ թվում՝**				
3.1	ՀՀ պետական արժեթղթերում (1.1-2.1)				
3.1.1	ԱՄՆ դոլար				
3.1.2	Եվրո				
3.1.3	Այլ				
3.2	Հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում (1.2-2.2)				
3.2.1	ԱՄՆ դոլար				
3.2.2	Եվրո				
3.2.3	Այլ				
3.3	Ավանդներ ՀՀ կենտրոնական բանկում (1.3-2.3)				
3.3.1	ԱՄՆ դոլար				
3.3.2	Եվրո				
3.3.3	Այլ				
3.4	Բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կազմակերպությունների և (կամ) բանկերի արժեթղթերում (1.4-2.4)				
3.4.1	ԱՄՆ դոլար				
3.4.2	Եվրո				
3.4.3	Այլ				
3.5	Բարձր վարկանիշ ունեցող կառավարությունների և (կամ) կենտրոնական բանկերի արժեթղթերում (1.5-2.5)				
3.5.1	ԱՄՆ դոլար				
3.5.2	Եվրո				
3.5.3	Այլ				
3.6	Ռեպո (1.6-2.6)				
3.6.1	ԱՄՆ դոլար				
3.6.2	Եվրո				
3.6.3	Այլ				
3.7	Սվոփ (1.7-2.7)				
3.7.1	ԱՄՆ դոլար				
3.7.2	Եվրո				
3.7.3	Այլ				
3.8					
3.8.1	ԱՄՆ դոլար				
3.8.2	Եվրո				
3.8.3	Այլ				
3.9					
3.9.1	ԱՄՆ դոլար				
3.9.2	Եվրո				
3.9.3	Այլ				
3.10					
3.10.1	ԱՄՆ դոլար				
3.10.2	Եվրո				
3.10.3	Այլ				

Աղյուսակ 4. Ներդրումների նկարագիրն ըստ կազմակերպությունների

	Կազմակերպության անվանումը	Կարճաժամկետ ներդրումների (դրամական միջոցներ) չափը	Ժամկետային ներդրումների (դրամական միջոցներ) չափը	Կարճաժամկետ ներդրումների փոխարժեքային տարբերության չափը	Նշումներ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1					
2					
3					
4					
5					
6					
	Ընդամենը				

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տնօրեն՝

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գլխավոր հաշվապահ՝

»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել ծրագրային ազդագրի նկատմամբ պահանջները,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 7-րդ կետը լրացնել 19-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

*«**19) «Ծրագրային ազդագիր».*** ազդագիր, որը կիրառվում է առաջարկի ծրագրի հիման վրա հրապարակային առաջարկ իրականացնելու և (կամ) արժեթղթերը կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու դեպքում և բավարարում է սույն կանոնակարգի 9.1-րդ գլխով սահմանված պահանջները:»:

2) Կանոնակարգը լրացնել գլուխ 9.1-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 9.1. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

21.1. Ծրագրային ազդագիրն առնվազն ներառում է սույն կանոնակարգի գլուխ 9-ով սահմանված տեղեկությունները՝ կախված թողարկողից և արժեթղթերից: Ընդ որում՝ ծրագրային ազդագիր կազմելու դեպքում սույն կանոնակարգի 16-րդ կետի 2-րդ ենթակետում նշված «ԱԶԴԱԳԻՐ» կամ «ԱՌԵՎՏՐԻ ԱԶԴԱԳԻՐ» բառերի փոխարեն անհրաժեշտ է լրացնել «ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ» բառերը: Իսկ արժեթղթերի մասին այն տեղեկությունները, որոնք ներառված են սույն կանոնակարգի Հավելված 18-ում՝ որպես թողարկման վերջնական պայմաններ, լրացվում են այնքանով, որքանով հայտնի են թողարկողին ծրագրային ազդագրի ներկայացման պահին, այդ թվում՝ հաշվի առնելով իրավասու կառավարման մարմնի՝ թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշումը: Թողարկման վերջնական պայմանները կցվում են ծրագրային ազդագրին կամ ներառվում են ծրագրային ազդագրում՝ լրացված սույն կանոնակարգի Հավելված 18-ով սահմանված ձևաթերթի համաձայն:

21.2. Ի լրումն սույն կանոնակարգի 21.1-րդ կետով սահմանված տեղեկությունների՝ ծրագրային ազդագրում անհրաժեշտ է ներառել նաև հետևյալ տեղեկությունները.

1) ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, ընդ որում, եթե ծրագրային ազդագրի գրանցման պահին թողարկողը դեռևս չի որոշել թողարկման վերջնական պայմանների հրապարակման մեթոդը, նշվում է, թե հասարակությունը ինչպես և երբ կարող է տեղեկություններ ստանալ այդ մասին.

2) առաջարկի ծրագրի ընդհանուր նկարագիրը:

21.3. Սույն գլխով սահմանված են ծրագրային ազդագրում ներառվող նվազագույն տեղեկությունները: Թողարկողը պարտավոր է ծրագրային ազդագրում ներառել ցանկացած այլ տեղեկություն, որը ողջամիտ ներդրողը կհամարեր էական իրազեկ ներդրումային որոշումներ կայացնելու համար՝ բացառությամբ սույն կանոնակարգի գլուխ 26-ով սահմանված գաղտնի համարվող տեղեկությունների:

21.4. Ծրագրային ազդագրով թողարկողը կարող է առաջարկի ծրագրի հիման վրա շարունակական թողարկում իրականացնել (արժեթղթերի համար կարգավորվող շուկայում առևտրին թույլատվություն ստանալ), եթե յուրաքանչյուր հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակման (արժեթղթերի՝ կարգավորվող շուկայում թույլտվություն ստանալու) պահին բոլոր փոփոխված տեղեկությունները որպես լրացում գրանցվել և հրապարակվել են սույն գլխի համաձայն: Ընդ որում՝

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մարտի 4-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.04.2016 թ. (ՀՀԳՏ N9 (552), 15.04.2016):

ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները Կենտրոնական բանկի կողմից որպես լրացում չեն գրանցվում, այլ ներկայացվում են Կենտրոնական բանկ և հրապարակվում՝ բացառությամբ սույն կանոնակարգի 21.5-րդ կետով սահմանված դեպքի:

21.5. Այն դեպքում, երբ ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմաններում ներառման ենթակա որևէ տեղեկատվություն չի համապատասխանում ծրագրային ազդագրի գրանցման պահին ներկայացված թողարկման վերջնական պայմաններում ներառված տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), ապա տվյալ տեղեկությունները՝ որպես ծրագրային ազդագրի լրացում, գրանցվում և հրապարակվում են սույն կանոնակարգի 21.8-րդ կետով սահմանված կարգով:

21.6. Ծրագրային ազդագրի գրանցումից հետո արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները Կենտրոնական բանկ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 օր առաջ: Սույն կանոնակարգի 34-րդ և 35-րդ կետերով սահմանված ազդագրի՝ Կենտրոնական բանկ ներկայացմանը, ինչպես նաև Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով սահմանված ազդագրի հրապարակմանը վերաբերող դրույթները (ըստ կիրառելիության) տարածվում են թողարկման վերջնական պայմանների ներկայացման և հրապարակման նկատմամբ:

21.7. Թողարկման վերջնական պայմանների բացահայտումը պետք է լինի այնպիսին, որպեսզի չխոչընդոտի ներդրողների՝ ժամանակին և հեշտ հասանելիությունը ներդրումային որոշումների կայացման համար անհրաժեշտ էական տեղեկություններին:

21.8. Ծրագրային ազդագրի՝ սույն կանոնակարգի 21.4-րդ կետով սահմանված լրացումը համարվում է գրանցված համապատասխան հայտը ստանալու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը: Լրացման գրանցումը մերժելու վերաբերյալ որոշումը Կենտրոնական բանկը կայացնում է լրացումը գրանցելու հայտը ստանալու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում: Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ մասերով սահմանված ազդագրի հրապարակմանը վերաբերող դրույթները տարածվում են սույն կետով սահմանված ծրագրային ազդագրի լրացումների հրապարակման նկատմամբ:

21.9. Ծրագրային ազդագրի գրանցման հայտը ներկայացնելու (ծրագրային ազդագրով երկրորդ և հաջորդ հրապարակային առաջարկների դեպքում՝ յուրաքանչյուր հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակման) պահից հետո՝ մինչև յուրաքանչյուր տեղաբաշխման ժամկետի ավարտը, ծրագրային ազդագրում ներառվող տեղեկությունների էական փոփոխությունների, նոր էական հանգամանք կամ փաստ ի հայտ գալու կամ ազդագրում էական անճշտություն, թերություն հայտնաբերելու դեպքում թողարկողի կամ տեղաբաշխողի վրա տարածվում են Օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ազդագրի լրացումներին առնչվող դրույթները:»:

3) Կանոնակարգի Հավելված 9-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ը» և «թ» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները, մասնավորապես՝ արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը, վճարման պարբերականությունը, վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի), օրերի հաշվարկման կարգը (օրինակ՝ 30/360, Act/Act, Act/360 և այլն): Եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել նաև տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի (դրա փոփոխության) մասին տեղեկատվություն: Այս դեպքում պետք է նաև նկարագրել, թե շուկայական ինչպիսի պայմաններ կարող են ազդել այդ ցուցանիշների վրա, ինչպես նաև այն մասին, թե ով է իրականացնելու արժեկտրոնի լողացող տոկոսադրույքի հաշվարկը: Սույն պարբերությունը լրացվում է միայն արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում՝ հակառակ դեպքում նշվում է դրույթ զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ:

թ. Արժեթղթերի մարման (մասնակի մարումների) ժամկետը և արժեքը: Մասնակի մարումների դեպքում դրա նկարագիրը: Այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն: Վաղաժամկետ մարման հնարավորության դեպքում (թողարկողի կամ ներդրողի նախաձեռնությամբ (քոլ օպցիոն, փութ օպցիոն)), դրա ժամկետները և պայմանները (այդ թվում՝ օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում), մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը)):»:

4) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 18-ով՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
11 մարտի 2016 թ., N 38-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի մարտի 4-ի թիվ 38-Ն որոշմամբ

«Հավելված 18
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

__ _____ ____ թ.

_____
(թողարկողի անվանումը)

_____
(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է __ _____ 20__ թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են _____ հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանը բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1	Թողարկողը (թողարկողի անվանումը)	
2	Երաշխավորողը	
3	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը, օրինակ, 2016 թ. 1-ին թողարկման համար՝ 2016-1)	
4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	
5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը)՝ ներառյալ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալն ըստ ստորադասության	
6	Թողարկման արժույթը	
7	Առաջարկի գինը	
8	Անվանական արժեքը	
9	Քանակը	
10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	
11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	
12	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	
15	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	
16	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	
17	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ՝ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	
18	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	
19	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
20	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	

	Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ	
21	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	
22	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	
23	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում են այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	
24	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
	1) ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
	1) ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
	Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ	
26	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	
27	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
	Այլ տեղեկություններ	
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում են համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում են տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	
30.	Արժեթղթի վարկանիշը	
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթեր ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	

Թողարկողը (երաշխավորողը) պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

_____

(պատասխանատու անձանց ստորագրություն)

»:

*«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով կազմակերպել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի շրջանառությունը, կասկածելի դրամանիշերի փորձաքննությունը, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգում կանխիկ դրամով իրականացվող գործառնությունները և կանխիկ դրամի ինկասացիան, ինչպես նաև հստակեցնել Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության և հնամաշության չափանիշները,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և 45-րդ հոդվածը, «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը հաստատելու մասին» թիվ 199-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 մարտի 2016 թ., N 40-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2016 թվականի մարտի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՆԻՇԵՐԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀՆԱՄԱՇՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐՈՒՄ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանոն 1. Կանոնակարգի կարգավորման առարկան

1.1. Սույն կանոնակարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Հայաստանի Հանրապետության դրամանիշերը փորձաքննության ընդունելը և փոխանակելը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում Հայաստանի Հանրապետության կանխիկ դրամով կատարվող գործառնությունները՝ բանկերում Հայաստանի Հանրապետության դրամանիշերի ընդունումը և փոխանակումը, Հայաստանի Հանրապետության թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը, կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների կարգավորումը, բանկային հաշիվներից կանխիկ դրամի դուրսգրումը, կանխիկ դրամի ինկասացիան:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2016 թ. մարտի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.04.2016 թ. (ՀՀԳՏ N10 (553), 2.05.2016):

Կանոն 2. Հիմնական հասկացություններ

2.1. ***Դրամանիշ***՝ արժույթ, որը Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց է իր անվանական արժեքով:

2.2. ***Թղթադրամ***՝ թղթե և/կամ պոլիմերային դրամանիշ: Թղթադրամների տեսակներն են՝ շրջանառու թղթադրամը և հավաքորդական թղթադրամը:

2.2.1. ***Շրջանառու թղթադրամ***՝ դրամաշրջանառությունն ապահովելու նպատակով թողարկվող և վերաթողարկվող թղթադրամ:

2.2.2. ***Հավաքորդական թղթադրամ***՝ հավաքորդական առարկա հանդիսացող թղթադրամ, որն ունի վաճառքի գին, թողարկվում է սահմանափակ քանակով և չի կարող վերաթողարկվել:

2.3. ***Մետաղադրամ***՝ դրամաշրջանառության համար թողարկված մետաղե դրամանիշ:

2.3.1. ***Շրջանառու մետաղադրամ***՝ դրամաշրջանառությունն ապահովելու նպատակով թողարկվող և վերաթողարկվող ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամ:

2.3.2. ***Շրջանառու հիշատակային մետաղադրամ***՝ մետաղադրամ, որը կրկնում է շրջանառու մետաղադրամն իր տեխնիկական բնութագրով, սակայն թողարկվում է ի հիշատակ որևէ իրադարձության կամ երևույթի, թողարկվում է սահմանափակ քանակով և չի կարող վերաթողարկվել (բացառություն են կազմում 1996 թ. թողարկման «Շախմատի 32-րդ օլիմպիադա» և 1997 թ. թողարկման «Եղիշե Չարենցի ծննդյան 100-ամյակ» 100 դրամ անվանական արժեքով և «Անահիտ աստվածուհի» 25000 դրամ անվանական արժեքով շրջանառու հիշատակային մետաղադրամները):

2.4. ***Կանխիկ դրամ***՝ շրջանառության մեջ գտնվող և շրջանառությունից հանված դրամանիշերը:

2.5. ***Կանխիկ դրամի վերահաշվում***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկեր (այսուհետ՝ բանկեր) մուտք եղած կանխիկ դրամի թերթ առ թերթ կամ հատ առ հատ վերահաշվումը:

2.6. ***Հաշվեխախալ***՝ բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված ավելցուկ, պակասորդ, անվճարունակ և կեղծ դրամանիշեր:

2.7. ***Նույն թողարկման թղթադրամներ***՝ նույն անվանական արժեքով, դիզայնի միևնույն հիմնական էլեմենտներով և նույն չափերով տարբեր տարիներին թողարկված թղթադրամներ:

2.8. ***Նույն թողարկման մետաղադրամներ***՝ նույն անվանական արժեքով, նույն չափերով տարբեր տարիներին թողարկված մետաղադրամներ:

2.9. ***Թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորում***՝ թղթադրամների կամ մետաղադրամների միավորում ամբողջական և/կամ ոչ ամբողջական արմատների, գլանակների, այնուհետև ծրարների կամ պարկերի մեջ՝ գրանցելով համապատասխան փաթեթավորման վավերապայմանները:

Կանոն 3. Դրամանիշերի վճարունակության հատկանիշները

3.1. Վճարունակ են համարվում այն թղթադրամները, որոնց իսկությունը կասկած չի հարուցում (չունեն կեղծման հատկանիշներ), և

1) ամբողջական են (պատռված չեն, պահպանված է նախնական տեսքը, ձևը (չափերը) և պատկերները)՝ բացառությամբ սույն կանոնակարգի 5.1 կետի «բ» ենթակետով սահմանված դեպքի, կամ
2) վնասված են՝ ամբողջական չեն, ունեն ծակծկվածություն, պատռվածքներ, մաշվածություն, ունեն ներկոտվածություն, բծեր, գրառումներ, այդ թվում նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո երևացող, գունաթափվել են, կրում են ջերմային, քիմիական կամ խոնավության ազդեցության հետքեր, սակայն պահպանված մասը թույլ է տալիս որոշել թղթադրամի իսկությունը և անվանական արժեքը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 5.1 կետի «բ» ենթակետով սահմանված դեպքի, կամ
3) բաղկացած են միևնույն թղթադրամին անվիճելիորեն պատկանող կտորներից, որոնք կազմում են ամբողջական թղթադրամ, կամ դրանց գումարային մակերեսը կազմում է ամբողջական թղթադրամի ընդհանուր մակերեսի առնվազն 60%-ը (մակերեսի չափը որոշվում է համաձայն հավելված 1-ի)՝ բացառությամբ սույն կանոնակարգի 5.1 կետի «բ» ենթակետով սահմանված դեպքի:

3.2. Վճարունակ են համարվում այն մետաղադրամները, որոնց իսկությունը կասկած չի հարուցում (չունեն կեղծման հատկանիշներ), և

1) ամբողջական են՝ պահպանված են նախնական տեսքը և ձևը, կամ
2) ծռված են, տափակած, կրում են ջերմային կամ քիմիական ազդեցության, մետաղի կորոզիայի հետքեր, սակայն երևում են դիմերեսի և դարձերեսի պատկերները:

Կանոն 4. Դրամանիշերի հնամաշության հատկանիշները

4.1. Հնամաշ են համարվում և մաշվածության կամ վնասվածության աստիճանից ելնելով հանդիսանում են շրջանառության համար ոչ պիտանի սույն կանոնակարգի 3.1 կետով սահմանված նկարագրին համապատասխանող հետևյալ վճարունակ թղթադրամները.

1) բացակայում է թղթադրամի ընդհանուր մակերեսի առնվազն 2%-ը, սակայն պահպանված է 60%-ից ավելին՝ բացառությամբ սույն կանոնակարգի 5.1 կետի «բ» ենթակետով սահմանված դեպքի, կամ
2) ունեն մեկ և ավելի պատռվածքներ՝ յուրաքանչյուրը նվազագույնը 1 սմ երկարությամբ, կամ
3) պատռված և սոսնձված կամ կպցված են կպչուն ժապավենով, կամ
4) գունաթափված են, կրում են ջերմային, քիմիական կամ խոնավության ազդեցության հետքեր, կամ
5) կեղտոտվածության և մաշվածության հետևանքով պահպանված չէ թղթադրամի պատկերների ու գույների հստակությունը, կամ
6) ունեն 1 և ավելի անցքեր՝ յուրաքանչյուրը նվազագույնը 5 մմ տրամագծով, սակայն պահպանված է թղթադրամի ընդհանուր մակերեսի առնվազն 60%-ը՝ բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից դակված հնամաշ թղթադրամների և սույն կանոնակարգի 5.1 կետի «բ» ենթակետով սահմանված դեպքի, կամ
7) ունեն ներկոտվածություն, որոնք ծածկում են թղթադրամի ընդհանուր մակերեսի 3%-ից ավելին, սակայն պահպանված մասը թույլ է տալիս որոշել թղթադրամի իսկությունը և անվանական արժեքը, կամ
8) ունեն գծեր և գրառումներ, այդ թվում՝ նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո երևացող, որոնք բաղկացած են 3-ից ավելի նիշերից (գծերից), գծերի, գրառումների ընդհանուր երկարությունը 2 սմ-ից ավելի է, իսկ գրառումների լայնությունը՝ 1 սմ-ից, կամ
9) հանդիսանում են արտադրական խոտան՝ թղթադրամներ, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկի) թողարկման թղթադրամներ, սակայն կրում են արտադրական շեղումների հատկանիշներ:

4.2. Հնամաշ են համարվում և հանդիսանում են շրջանառության համար ոչ պիտանի սույն կանոնակարգի 3.2 կետով սահմանված նկարագրին համապատասխանող հետևյալ վճարունակ մետաղադրամները, որոնք.

1) ծռված են, տափակած, կրում են ջերմային, քիմիական ազդեցության կամ մետաղի կորոզիայի հետքեր, սակայն երևում են դիմերեսի և դարձերեսի պատկերները, կամ
2) հանդիսանում են արտադրական խոտան մետաղադրամներ, որոնք հանդիսանում են Կենտրոնական բանկի թողարկման մետաղադրամներ, սակայն կրում են արտադրական շեղումների հատկանիշներ:

Կանոն 5. Դրամանիշերի անվճարունակության հատկանիշները

5.1. Անվճարունակ են համարվում այն թղթադրամները, որոնց իսկությունը կասկած չի հարուցում (չունեն կեղծման հատկանիշներ), սակայն

1) պահպանված մակերեսը կամ միևնույն թղթադրամին պատկանող կտորների գումարային մակերեսը չի կազմում ամբողջական թղթադրամի ընդհանուր մակերեսի առնվազն 60%-ը, կամ
2) կրում են պաշտպանական հատկանիշների միտումնավոր հեռացման հետքեր՝ հեռացված է փայլաթիթեղը (կինեգրամա, հոլոգրամա), պատուհանածև կամ թաքնված ներգիծը և այլն, ամբողջությամբ բացակայում է թղթադրամի փայլաթիթեղը պարունակող հատվածը՝ անկախ ամբողջական թղթադրամի ընդհանուր մակերեսի 60%-ը պահպանված լինելու փաստից, կամ
3) մակերեսի վրա առկա է «նմուշ», «specimen» մակնշումը (կատարված տպարանային տպագրման կամ դրոշմման եղանակով):

5.2. Անվճարունակ են համարվում այն մետաղադրամները, որոնց իսկությունը կասկած չի հարուցում (չունեն կեղծման հատկանիշներ), սակայն պահպանված չէ ամբողջականությունը (առկա են միտումնավոր ձևափոխման հետքեր՝ ծակված, կտրված և այլն):

Կանոն 6. Կեղծ դրամանիշեր

6.1. Կեղծ են համարվում այն դրամանիշերը, որոնք չեն հանդիսանում Կենտրոնական բանկի թողարկման դրամանիշեր:

6.2. Կեղծ են համարվում ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մասնակի կեղծված (ձևափոխված) դրամանիշերը: Թղթադրամի դեպքում մասնակի կեղծում (ձևափոխում) համարվում է.

1) անվանական արժեքն արտահայտող տառերի և թվերի սոսնձումը, հավելագրումը, որը փոխում է թղթադրամի անվանական արժեքը, կամ

2) թղթադրամի ձևավորման այլ տարրերի և պաշտպանական հատկանիշների (կինեգրամա, հոլոգրամա և այլն) կեղծումը, կամ
3) երկու և ավելի կտորներից բաղկացած այն թղթադրամները, որոնց կտորներից առնվազն մեկը չի հանդիսանում Կենտրոնական բանկի թողարկման թղթադրամի կտոր:

Կանոն 7. Դրամանիշերի ընդունման և փոխանակման կարգը

7.1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց պարտավոր են որպես վճարամիջոց ընդունել սույն կանոնակարգի 3.1 կետի «ա» և «բ» ենթակետերով, 3.2 կետի «ա» ենթակետով սահմանված նկարագրին համապատասխանող դրամանիշերը, ինչպես նաև կարող են ընդունել սույն կանոնակարգի 3.1 կետի «գ» և 3.2 կետի «բ» ենթակետերով սահմանված նկարագրին համապատասխանող դրամանիշերը:

7.2. Իրավաբանական անձինք սույն կանոնակարգի 3.1 կետի «գ» ենթակետով, 3.2 կետի «բ» ենթակետով սահմանված նկարագրին համապատասխանող դրամանիշերը պետք է առանձնացնեն, շրջանառության մեջ բաց չթողնեն և հանձնեն սպասարկող բանկերին:

7.3. Բանկերը պարտավոր են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունել և անվճար փոխանակել սույն կանոնակարգի 3.1, 3.2, 4.1 և 4.2 կետերով սահմանված նկարագրին համապատասխանող դրամանիշերը:

7.4. Բանկերը պարտավոր են շրջանառության համար պիտանի դրամանիշերից առանձնացնել 4.1 և 4.2 կետերում նշված հնամաշ դրամանիշերը, տեսակավորել, շրջանառության մեջ բաց չթողնել և սահմանված կարգով հանձնել Կենտրոնական բանկ:

7.5. Բանկերը պարտավոր են իրենց հաճախորդներից ընդունել և (նրանց ցանկությամբ) անվճար փոխանակել մեկ անվանական արժեքի դրամանիշերը մեկ այլ անվանական արժեքի դրամանիշերով:

7.6. Բանկերը կարող են իրենց հաճախորդներ չհանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունել և (նրանց ցանկությամբ) փոխանակել մեկ անվանական արժեքի դրամանիշերը մեկ այլ անվանական արժեքի դրամանիշերով՝ յուրաքանչյուր դրամանիշից մինչև 50-ական հատն անվճար, իսկ մնացած մասը՝ իրենց կողմից սահմանված սակագների համաձայն:

7.7. Բանկերը պարտավոր են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունել նաև իսկության կամ վճարունակության առումով կասկածելի դրամանիշերը, անվճարունակ և հավանական գործարանային խոտան հանդիսացող դրամանիշերը՝ դիտարկելով դրանք փորձաքննության ենթակա դրամանիշեր և առանձին փաթեթավորմամբ հանձնել Կենտրոնական բանկ՝ փորձաքննությամբ դրանց իսկությունը և փոխանակման հնարավորությունը պարզելու համար: Նշված դրամանիշերը բանկերը հաշվառում են իրենց կողմից սահմանված կարգերի պահանջներին համապատասխան:

7.8. Բանկերում կանխիկ դրամի ընդունման ժամանակ անվճարունակ դրամանիշեր հայտնաբերելու դեպքում կազմվում է անվճարունակ դրամանիշերի հայտնաբերման ակտ (հավելված 2) երեք օրինակից, որը ստորագրվում է հաճախորդի, անվճարունակ դրամանիշը հայտնաբերած գանձապահի, պատասխանատու աշխատակցի և բանկի դրամարկղային հանգույցի ղեկավարի կողմից: Եթե հաճախորդը հրաժարվում է ստորագրել, ակտում այդ մասին պետք է կատարվի համապատասխան նշում: Ակտի մեկ օրինակն ուղարկվում է Կենտրոնական բանկ՝ անվճարունակ դրամանիշի հետ միասին: Ակտի երկրորդ օրինակը մնում է անվճարունակ դրամանիշերը հայտնաբերող բանկում, իսկ երրորդ օրինակը հանձնվում է կանխիկ դրամը հանձնող հաճախորդին:

7.9. Բանկերում կանխիկ դրամի ընդունման ժամանակ կեղծ դրամանիշեր հայտնաբերելու դեպքում պարտադիր կարգով կազմվում է ակտ չորս օրինակից (Հավելված 3), որը ստորագրվում է հաճախորդի, կեղծ դրամանիշը հայտնաբերած գանձապահի, պատասխանատու աշխատակցի և բանկի դրամարկղային հանգույցի ղեկավարի կողմից: Ակտի մեկ օրինակը կեղծ դրամանիշի հետ միասին հանձնվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: Ակտի երկրորդ օրինակն ուղարկվում է Կենտրոնական բանկ՝ կեղծված դրամանիշի հատկանիշների մանրամասն նկարագրության հետ միասին: Ակտի երրորդ օրինակը մնում է կեղծ դրամանիշերը հայտնաբերող բանկում, իսկ չորրորդ օրինակը հանձնվում է կանխիկ դրամը հանձնող հաճախորդին:

Բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ, եթե կեղծ դրամանիշերը հայտնաբերվում են հաճախորդի կողմից կանխիկ դրամը հանձնելուց հետո, և հնարավոր չէ պարզել, թե տվյալ դրամը որ հաճախորդի կողմից է մուտքագրվել բանկ, պարտադիր կարգով կազմվում է ակտ երեք օրինակից (Հավելված 3), որի մեջ հաճախորդի փոխարեն նշվում են այն գանձապահի տվյալները, ով հայտնաբերել է կեղծ դրամանիշերը: Ակտը ստորագրվում է կեղծ դրամանիշը հայտնաբերող գանձապահի, պատասխանատու աշխատակցի և բանկի դրամարկղային հանգույցի ղեկավարի կողմից:

Ակտում նշվում է կեղծ դրամանիշը հայտնաբերող բանկի անվանումը, դրամանիշերը բանկ հանձնող հաճախորդի անունը/անվանումը կամ կեղծ դրամանիշերը հայտնաբերող գանձապահի անունը/ազգանունը, ամսաթիվը, դրամանիշի համարանիշը և անվանական արժեքը:

7.10. Բանկերն իսկության կամ վճարունակության առումով կասկածելի դրամանիշերը Կենտրոնական բանկ պետք է ուղարկեն ինկասացիոն կազմակերպության միջոցով՝ Կենտրոնական բանկի մուտքի գործառնական դրամարկղ կամ բանկի ներկայացուցչի միջոցով՝ Կենտրոնական բանկի դրամանիշերի փոխանակման գործառնական դրամարկղ:

1) Ինկասացիոն կազմակերպության միջոցով դրամանիշեր ուղարկելու դեպքում դրանք տեղադրվում են ծրարի մեջ՝ նշելով «Փորձաքննություն» բառը, ծրարին կից ուղարկվում է նաև արժեքներին ուղեկցող ցուցակ (Հավելված 4), որի մեջ նշվում է.
- դրամանիշի անվանական արժեքը,
- գումարը,
- թղթադրամների դեպքում՝ համարանիշը (եթե առկա է),
- բազմակտոր թղթադրամների դեպքում՝ կտորների քանակը,
- դրամանիշերը հանձնող անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հասցեն (եթե առկա է):

2) Բանկի ներկայացուցչի միջոցով ուղարկելու դեպքում ներկայացուցչի կողմից տեղում լրացվում է համապատասխան դիմում և դրամանիշերի հետ հանձնվում գանձապահին, ինչի դիմաց դիմողին տրվում է անդորրագիր: Անդորրագրում նշվում են հանձնված դրամանիշերի քանակը, անվանական արժեքը, թղթադրամների դեպքում՝ համարանիշը, բազմակտոր թղթադրամների դեպքում՝ կտորների քանակը:

7.11. Քաղաքացիները իսկության կամ վճարունակության առումով կասկածելի դրամանիշերը կարող են անձամբ փորձաքննության ներկայացնել Կենտրոնական բանկի Երևանի դրամանիշերի փոխանակման գործառնական դրամարկղ՝ կից դիմումով (Հավելված 5):

Կանոն 8. Կենտրոնական բանկում դրամանիշերը փորձաքննության ընդունելը և փոխանակելը

8.1. Կենտրոնական բանկում իրականացվում է բանկերից ստացված՝ իսկության կամ վճարունակության առումով կասկածելի, քաղաքացիներից կից դիմումով ընդունված դրամանիշերի փորձաքննություն: Կենտրոնական բանկում դրամանիշերի փորձաքննությունն իրականացվում է անվճար:

8.2. Այն դրամանիշերը, որոնք փորձաքննության արդյունքներով համաձայն 3.1, 3.2, 4.1, 4.2 ենթակետերի ճանաչվում են վճարունակ, փոխանակվում են Կենտրոնական բանկի կողմից, և դրանց վրա դրվում է «Ենթակա է փոխանակման» դրոշմը:

8.3. Այն դրամանիշերը, որոնք փորձաքննության արդյունքներով, համաձայն 5.1 և 5.2 ենթակետերի, ճանաչվում են անվճարունակ, չեն վերադարձվում և չեն փոխանակվում: Դրամանիշերը փորձաքննության ներկայացնողին տրվում է միայն եզրակացություն՝ կից դրամանիշի (դրամանիշերի) լուսանկարչական հավելվածով: Թղթադրամների վրա դրվում է «Անվճարունակ» դրոշմը: Այդ դրամանիշերը համարվում են ոչնչացման ենթակա և պահվում են առանձին, 6 ամիս ժամկետով, որի ընթացքում հանձնողն իրավունք ունի ծանոթանալ իր կողմից հանձնած դրամանիշերին:

8.4. Այն դրամանիշերը, որոնք փորձաքննության արդյունքներով, համաձայն 6.1 և 6.2 ենթակետերի, ճանաչվում են կեղծ, չեն վերադարձվում և չեն փոխանակվում: Դրամանիշերը փորձաքննության ներկայացնողին տրվում է միայն եզրակացություն՝ կից դրամանիշի (դրամանիշերի) լուսանկարչական հավելվածով: Թղթադրամների և մետաղադրամների վրա դրվում է «կեղծ» դրոշմը: Բոլոր կեղծ դրամանիշերն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Ոստիկանություն:

Կանոն 9. Թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը բանկերում

9.1. Բանկերում թղթադրամները և մետաղադրամները փաթեթավորվում են սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

9.2. Բանկերում թղթադրամները և մետաղադրամները փաթեթավորվում են գանձապահների կողմից ավտոմատ փաթեթավորող համակարգերի (այսուհետ՝ Ավտոմատ համակարգ) և/կամ ձեռքի աշխատանքի միջոցով:

9.3. Շրջանառության համար պիտանի և հնամաշ թղթադրամներն ու մետաղադրամները փաթեթավորվում են առանձին:

9.4. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման 100 հատ թղթադրամը, համապատասխան փաթեթաթղթով փաթեթավորված, համարվում է մեկ ամբողջական արմատ: Փաթեթաթղթի վրա նշվում են փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվա-

նումը, թղթադրամի անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը կամ անվանական դրոշմակնիքը, ստորագրությունը (այսուհետ՝ թղթադրամների փաթեթավորման վավերապայմաններ):

9.5. Նույն անվանական արժեքի թղթադրամների տասը ամբողջական արմատից ձևավորված փաթեթը համարվում է մեկ ամբողջական կապոց:

9.6. Նույն անվանական արժեքի թղթադրամների ամբողջական արմատները, որոնցից հնարավոր չէ ձևավորել ամբողջական կապոց, ձևավորվում են որպես ոչ ամբողջական կապոց: Նույն անվանական արժեքի թղթադրամների ամբողջական և ոչ ամբողջական արմատներից կամ նույն անվանական արժեքի մեկ ոչ ամբողջական արմատից ձևավորված կապոցը ևս համարվում է ոչ ամբողջական կապոց:

9.7. Ամբողջական և ոչ ամբողջական կապոցները համալրվում են համապատասխան վրադիրով կամ պիտակով: Վրադիրի կամ պիտակի վրա նշվում են փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, թղթադրամի անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը, անվանական դրոշմակնիքը կամ գանձապահին կցված անհատական դրոշմակնիքը, վրադիրի դեպքում՝ նաև ստորագրությունը: Ոչ ամբողջական կապոցի վրադիրի կամ պիտակի աջ անկյունում նշվում են նաև «ոչ ամբողջական» բառերը:

9.8. Նույն գանձապահի կողմից տարբեր ամսաթվերին փաթեթավորված կամ տարբեր գանձապահների կողմից փաթեթավորված նույն անվանական արժեքի թղթադրամների արմատներից ձևավորված ամբողջական կամ ոչ ամբողջական կապոցը համարվում է հավաքական: Հավաքական կապոցները համալրվում են համապատասխան վրադիրով կամ պիտակով, որի վրա նշվում են փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը, անվանական դրոշմակնիքը կամ գանձապահին կցված անհատական դրոշմակնիքը, վրադիրի դեպքում նաև ստորագրությունը, ինչպես նաև աջ անկյունում նշվում են ամբողջական կապոցների համար «հավաքական», իսկ ոչ ամբողջականի համար՝ «ոչ ամբողջական հավաքական» բառերը:

9.9. Գանձապահները թղթադրամները փաթեթավորում են յուրաքանչյուր անվանական արժեքի թղթադրամի համար նախատեսված փաթեթաթղթերով և վրադիրներով՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 6-ի:

9.10. Թղթադրամներն Ավտոմատ համակարգով փաթեթավորելու դեպքում կարող են օգտագործվել առանց գունային տարբերակումների փաթեթաթղթեր, որոնց համար սույն կանոնակարգի 9.4 կետում սահմանված թղթադրամների փաթեթավորման վավերապայմանները պարտադիր չեն:

9.11. Թղթադրամների կապոցները փաթեթավորվում են պոլիէթիլենային ծրարներով: Արմատները փաթեթավորվում են միայն լայնակի:

9.12. Թղթադրամների կապոցները գանձապահների կողմից փաթեթավորվելու դեպքում լայնակի փաթեթավորված թղթադրամների արմատները և վրադիրը պոլիէթիլենային ծրարների մեջ տեղադրելուց հետո ծրարի բաց եզրը եռակցվում է՝ ծրարի վրա դրոշմելով փաթեթավորող բանկի կոդը (նշանը): Ավտոմատ համակարգերի միջոցով փաթեթավորելու դեպքում պիտակի տեղադրումից հետո ծրարի բաց եզրը միայն եռակցվում է:

9.13. Տարբեր թողարկումների նույն անվանական արժեքով թղթադրամները նույն արմատում չեն փաթեթավորվում:

9.14. Բանկերի կողմից Կենտրոնական բանկ հանձնելու նպատակով յուրաքանչյուր անվանական արժեքի թղթադրամների ծավալների նվազագույն սահմանաչափերը սահմանվում են Կենտրոնական բանկի և բանկերի միջև կնքվող դրամարկղային սպասարկման պայմանագրով:

9.15. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման մետաղադրամները փաթեթավորվում են առանց արտաքին կարերի կտորե պարկերում: Յուրաքանչյուր պարկին ամրացվում է պիտակ, որի վրա նշվում է փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, մետաղադրամի անվանական արժեքը, գումարը թվերով, փաթեթավորման օրը, ամիսը և տարին, փաթեթավորող գանձապահի անունը, ազգանունը, անվանական դրոշմակնիքը կամ գանձապահին կցված անհատական դրոշմակնիքը, ստորագրությունը (այսուհետ՝ մետաղադրամների փաթեթավորման վավերապայմաններ):

9.16. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման մետաղադրամները կարող են փաթեթավորվել նաև պոլիէթիլենային փաթեթներում: Մետաղադրամները և սույն կանոնակարգի 9.15 կետում սահմանված մետաղադրամների փաթեթավորման վավերապայմաններով վրադիրը պոլիէթիլենային ծրարների մեջ տեղադրելուց հետո ծրարի բաց եզրը եռակցվում է՝ ծրարի վրա դրոշմելով փաթեթավորող բանկի կոդը (նշանը):

9.17. Մետաղադրամները նախքան պարկերի մեջ տեղադրելը փաթեթավորվում են թղթե կամ պոլիէթիլենային փաթեթներում՝ յուրաքանչյուր ծրարում 100 հատ մետաղադրամ:

9.18. Նույն անվանական արժեքով, նույն թողարկման 50 հատ մետաղադրամները կարող են նաև համապատասխան փաթեթաթղթով փաթեթավորվել գլանակների տեսքով: Գլանակի փաթեթաթղթի վրա նշվում է փաթեթավորող բանկի (բանկի մասնաճյուղում փաթեթավորվելու դեպքում՝ նաև բանկի մասնաճյուղի) անվանումը, մետաղադրամի անվանական արժեքը, գումարը թվերով:

9.19. Պարկերում փաթեթավորվող մետաղադրամները Կենտրոնական բանկ հանձնելու դեպքում բանկերի կողմից կարող են փաթեթավորվել առանց սույն կանոնակարգի 9.17 կետով նախատեսված թղթե կամ պոլիէթիլենային փաթեթների մեջ տեղադրելու: Բանկերին տրամադրելու նպատակով Կենտրոնական բանկի կողմից պարկերում փաթեթավորվող մետաղադրամները կարող են փաթեթավորվել առանց սույն կանոնակարգի 9.17 կետով նախատեսված թղթե կամ պոլիէթիլենային փաթեթների մեջ տեղադրելու:

9.20. Մետաղադրամները պարկերում տեղադրելուց հետո՝

1) կապվում են լարանով՝ պիտակի հետ միասին, և ծայրերն ամրակցվում կապարակնիքով, կամ

2) կնքվում են միանգամյա օգտագործման համարակալված կնիքով՝ պիտակի հետ միասին:

9.21. Գլանակների տեսքով փաթեթավորված մետաղադրամները փաթեթավորվում են ինչպես կտորե պարկերում, այնպես էլ պոլիէթիլենային ծրարներով, յուրաքանչյուրում 20 հատ գլանակ, որի մեջ դրվում է սույն կանոնակարգի 9.15 կետի վավերապայմաններով վրադիր:

9.22. Պոլիէթիլենային ծրարների մեջ գլանակները տեղադրելուց հետո ծրարի բաց եզրն ամրակցվում է՝ ծրարի վրա դրոշմելով փաթեթավորող բանկի կոդը (նշանը):

9.23. Կենտրոնական բանկ հանձնվող մետաղադրամները բանկերի կողմից փաթեթավորվում են միայն ամբողջական կտորե պարկերով կամ պոլիէթիլենային ծրարներով՝ սույն կանոնակարգի 9.24 կետով նախատեսված սահմանաչափերով:

9.24. Կենտրոնական բանկ հանձնելու համար մետաղադրամները պարկերով կամ պոլիէթիլենային ծրարներով փաթեթավորելու համար սահմանվում են հետևյալ սահմանաչափերը.

10 լումա	-	300 դրամ	10 դրամ	-	10’000 դրամ
20 լումա	-	500 դրամ	20 դրամ	-	20’000 դրամ
50 լումա	-	1’000 դրամ	50 դրամ	-	50’000 դրամ
1 դրամ	-	2’000 դրամ	100 դրամ	-	100’000 դրամ
3 դրամ	-	3’000 դրամ	200 դրամ	-	200’000 դրամ
5 դրամ	-	5’000 դրամ	500 դրամ	-	500’000 դրամ

9.25. Հնամաշ, շրջանառությունից հետ կանչված, իսկության կամ վճարունակության առումով կասկածելի (կեղծ, անվճարունակ և հավանական գործարանային խոտան) դրամանիշերն անկախ անվանական արժեքից պետք է փաթեթավորել թղթադրամների/մետաղադրամների փաստացի առկա քանակի չափով:

9.26. Հնամաշ թղթադրամների արմատների փաթեթաթղթի, հնամաշ թղթադրամների կապոցի վրադիրի կամ պիտակի, հնամաշ մետաղադրամների պարկի պիտակի աջ անկյունում նշվում է նաև «Հնամաշ» բառը, իսկության կամ վճարունակության առումով կասկածելի դրամանիշերի դեպքում՝ «Կասկածելի» բառը:

9.27. Հիշատակային մետաղադրամները փաթեթավորվում են առանձին պարկերով՝ յուրաքանչյուր պարկում 1000 հատ մետաղադրամ:

9.28. Հիշատակային մետաղադրամների պարկերին ամրացվում է պիտակ, որի վրա նշվում են սույն կանոնակարգի 9.15 կետում սահմանված մետաղադրամների փաթեթավորման վավերապայմանները, ինչպես նաև հիշատակային մետաղադրամի անվանումը:

9.29. Եթե նույն անվանական արժեքի հիշատակային և շրջանառու մետաղադրամների չափերը համընկնում են, ապա այդ մետաղադրամները կարող են փաթեթավորվել միասին:

Կանոն 10. Բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների վերականգնումը

10.1. Բանկերի գլխամասերը միմյանց տրամադրված կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերած հաշվեսխալների դեպքերը կարգավորում են պայմանագրային հիմունքներով: Բանկերի միջև կնքվող՝ միմյանց դրամարկղային սպասարկման մասին պայմանագրերը չպետք է հակասեն սույն կանոնակարգին: Կնքվող պայմանագրերը պարտադիր կարգով պետք է ընդգրկեն միմյանց տրամադրված կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների կարգավորման մեխանիզմները:

10.2. Բանկերի կողմից իրենց հաճախորդների դրամարկղային սպասարկումը, այդ թվում նաև ինկասացված կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվեսխալների դեպքերը, կարգավորվում են երկկողմանի կնքվող պայմանագրերով: Այն դրամարկղային ծառայությունների կարգավորումը, որոնց համար դրամարկղային սպասարկման պայմանագրեր չեն կնքվում, իրականացվում է սույն կանոնակարգի 17-րդ կանոնի համաձայն ընդունված Բանկի ներքին կարգերով:

10.3. Բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ընթացքում հայտնաբերված՝ իսկության մեջ կասկած առաջացնող դրամանիշերն ուղարկվում են Կենտրոնական բանկ փորձաքննության՝ համաձայն սույն կանոնակարգի 7.7 կետի:

Կանոն 11. Բանկային հաշիվներից կանխիկ դրամի դուրսգրումը

11.1. Բանկերը, հաճախորդների (նրանց ցանկությամբ) բանկային հաշիվներում առկա միջոցների սահմաններում, տրամադրում են կանխիկ դրամ հաճախորդի պահանջած անվանական արժեքի դրամանիշերով, եթե այլ բան նախատեսված չէ բանկի և հաճախորդի միջև կնքված բանկային հաշվի սպասարկման պայմանագրով:

11.2. Կենտրոնական բանկը բանկերի դրամարկղային սպասարկումն իրականացնում է ըստ Կենտրոնական բանկի և տվյալ բանկի միջև կնքված Կենտրոնական բանկում թղթակցային հաշվի բացման և սպասարկման ու բանկերի դրամարկղային սպասարկման պայմանագրերի:

11.3. Անվճարունակության (սնանկացման) գործընթացում գտնվող բանկերի դրամարկղային սպասարկումն իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

Կանոն 12. Բանկերում կանխիկ դրամի ինկասացիան

12.1. Բանկերում կանխիկ դրամի ինկասացիան իրականացվում է արժեքներ փոխադրող բանկի և ինկասացիոն կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա և սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան:

12.2. Հինգ միլիոն դրամ գումարը գերազանցող կանխիկ դրամի միջբանկային, այդ թվում՝ ներբանկային (նույն բանկերի մասնաճյուղերի միջև, բանկոմատների լիցքավորման և բանկոմատի մնացորդը բանկ տեղափոխելու նպատակով իրականացվող) բոլոր փոխադրումներն իրականացվում են միայն ինկասացիոն կազմակերպությունների միջոցով:

12.3. Ինկասացիոն կազմակերպության միջոցով բանկից հաճախորդին և հակառակ ուղղությամբ կանխիկ դրամի փոխադրման, հանձնման և ընդունման ձևերը սահմանվում են բանկի, հաճախորդի և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված եռակողմ պայմանագրերով, որոնցով սահմանվում են՝

1) բանկերում կանխիկ դրամի ընդունման և հանձնման ձևերը,
2) ինկասացիոն կազմակերպության կողմից բանկերի հաճախորդներից կանխիկ դրամի ընդունման, հանձնման ձևերը և ժամկետները,
3) կանխիկ դրամի փոխադրման և հանձնման ժամանակ կանխիկ դրամի համար կողմերից մեկի պատասխանատվությունների և պարտականությունների փոխանցումը մյուս կողմին,
4) կանխիկ դրամի ապահովագրումը:

Կնքված պայմանագրերը չպետք է հակասեն «Ինկասացիայի մասին» օրենքի, սույն կանոնակարգի և Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին:

12.4. Եթե բանկի և հաճախորդի միջև կանխիկ դրամի (հինգ միլիոն դրամ գումարը գերազանցող) փոխադրման պատասխանատվությունը պայմանագրերի համաձայն դրված է բանկի վրա, ապա այդ փոխադրումն իրականացվում է միայն ինկասացիոն կազմակերպությունների միջոցով:

Կանոն 13.Ինկասացիոն կազմակերպության կողմից կանխիկ դրամի ընդունման և հանձնման ձևերը

13.1. Բանկերում կանխիկ դրամը (բացառությամբ թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների) ինկասացիոն կազմակերպությանը հանձնվում է հետևյալ ձևերով՝

1) Կնքվող պարկերով (կտորե, պոլիէթիլենային), կոնտեյներներով (այսուհետ՝ փոխադրման միավոր), որոնցում կանխիկ դրամը և արժեքներին ուղեկցող ցուցակի մեկ օրինակը, ստորագրված բանկի պատասխանատու անձանց կողմից, դրվում են ինկասատորների ներկայությամբ և կնքվում բանկի կնիքով: Մինչև փոխադրման միավորի կնքումը ինկասատորները ճշտում են առաքվող կանխիկ դրամի և արժեքներին ուղեկցող ցուցակի համապատասխանությունը՝ ստուգելով թղթադրամները կապոցներով և արմատներով, իսկ մետաղադրամները՝ պարկերով կամ պոլիէթիլենային փաթեթներով՝ համաձայն պարկերի, պոլիէթիլենային փաթեթների պիտակների վրա առկա վավերապայ-

մաններ: Կանխիկ դրամի հետ միասին ինկասատորներին է հանձնվում նաև արժեքներն ուղեկցող ցուցակի երկրորդ օրինակը:

2) Թղթադրամները կապոցներով, մետաղադրամները պարկերով կամ պոլիէթիլենային փաթեթներով՝ ստուգելով թղթադրամների կապոցները, արմատների քանակը և մետաղադրամների պարկերը, պոլիէթիլենային փաթեթները: Վնասված կնիքներով և պատռված փաթեթներով կապոցները կամ պարկերը ենթակա են վերափաթեթավորման: Կանխիկ դրամի հետ միասին ինկասատորներին են հանձնվում նաև արժեքներն ուղեկցող ցուցակի երկու օրինակները:
3) Նախօրոք կնքված փոխադրման միավորներով՝ համաձայն փոխադրման միավորի պիտակների վրա առկա վավերապայմանների: Կանխիկ դրամը և բանկի պատասխանատու անձի կողմից ստորագրված արժեքներն ուղեկցող ցուցակի մեկ օրինակը պատասխանատու անձի (անձանց) կողմից նախապես դրվում է փոխադրման միավորի մեջ և կնքվում բանկի կնիքով: Կանխիկ դրամի նախօրոք կնքված փոխադրման միավորի հետ միասին ինկասատորներին է հանձնվում նաև արժեքներն ուղեկցող ցուցակի երկրորդ օրինակը:

13.2. Բանկերի միջև ինկասացիոն կազմակերպությունների միջոցով առաքվող կանխիկ դրամը ստացող բանկի կողմից ենթակա է ընդունման նույն ձևով, ինչ ձևով առաքող բանկում հանձնվել է ինկասացիոն կազմակերպությանը:

13.3. Բանկերում ինկասացիոն կազմակերպությունից կանխիկ դրամի (բացառությամբ թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների) ընդունումը, կախված սույն կանոնակարգի 13.1 կետում նշված հանձնման ձևերից, համապատասխանաբար իրականացվում է.

1) Կնքված փոխադրման միավորներով՝ մինչև կնքված փոխադրման միավորի բացելը ստուգվում են փոխադրման միավորի և կնիքների ամբողջական (չվնասված) լինելը:

   Փոխադրման միավորների, դրանց կնիքների վնասված լինելու դեպքում կազմվում է ակտ, որը ստորագրվում է կանխիկ դրամն ընդունող բանկի պատասխանատու անձի (անձանց) և ինկասատորների կողմից: Փոխադրման միավորներում առկա կանխիկ դրամը վերահաշվվում է կապոցներով և արմատներով, մետաղադրամների դեպքում՝ պարկերով, պոլիէթիլենային փաթեթներով: Կապոցների, պարկերի, պոլիէթիլենային փաթեթների վնասված լինելու դեպքում կանխիկ դրամը վերահաշվվում է՝ թղթադրամները թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատ առ հատ: Փոխադրման միավորում առկա կանխիկ դրամը համեմատվում է փոխադրման միավորում առկա արժեքներն ուղեկցող ցուցակի հետ: Անհամապատասխանությունների դեպքում կազմվում է ակտ, որը հիմք է հանդիսանում հայտնաբերված հաշվեսխալը վերականգնելու համար՝ փոխադարձ կնքված երկկողմանի պայմանագրերի համաձայն: Ակտը ստորագրում են կանխիկ դրամն ընդունող բանկի լիազոր անձինք և ինկասատորները:
2) Թղթադրամները կապոցներով՝ ստուգելով փաթեթավորման ճշտությունը, արմատների քանակը, փաթեթների և կնիքների ամբողջականությունն ու անվնաս լինելը: Մետաղադրամները պարկերով, պոլիէթիլենային փաթեթներով՝ ստուգելով պարկերի և կնիքների ամբողջականությունն ու անվնաս լինելը:

   Վնասված, պատռված կապոցները, պարկերը, պոլիէթիլենային փաթեթներն ընդունվում են՝ թղթադրամները թերթ առ թերթ, մետաղադրամները՝ հատ առ հատ հաշվելով: Կանխիկ դրամը համեմատվում է ինկասատորներից ստացված արժեքներին ուղեկցող ցուցակի հետ: Հաշվեսխալների հայտնաբերման դեպքում կազմվում է ակտ, որը հիմք է հանդիսանում հայտնաբերված հաշվեսխալը վերականգնելու համար՝ փոխադարձ կնքված երկկողմանի պայմանագրերի համաձայն: Ակտը ստորագրում են կանխիկ դրամն ընդունող բանկի լիազոր անձինք և ինկասատորները:
3) Նախօրոք կնքված փոխադրման միավորներով՝ ստուգելով փոխադրման միավորի և կնիքների ամբողջական (չվնասված) լինելը:

   Նախօրոք կնքված փոխադրման միավորների, դրանց կնիքների վնասված լինելու դեպքում կազմվում է ակտ, որը ստորագրվում է կանխիկ դրամն ընդունող բանկի պատասխանատու անձի (անձանց) և ինկասատորների կողմից: Փոխադրման միավորներում առկա կանխիկ դրամը վերահաշվվում է կապոցներով և արմատներով, մետաղադրամների դեպքում՝ պարկերով, պոլիէթիլենային փաթեթներով: Կապոցների, պարկերի, պոլիէթիլենային փաթեթների վնասված լինելու դեպքում՝ թերթ առ թերթ, հատ առ հատ: Փոխադրման միավորում առկա կանխիկ դրամը համեմատվում է արժեքներն ուղեկցող ցուցակի հետ: Անհամապատասխանությունների դեպքում կազմվում է ակտ, որը հիմք է հանդիսանում հայտնաբերված հաշվեսխալը վերականգնելու համար՝ փոխադարձ կնքված երկկողմանի պայմանագրերի համաձայն: Ակտը ստորագրում են կանխիկ դրամն ընդունող բանկի լիազոր անձինք և ինկասատորները:

13.4. Բանկերում թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներն ինկասացիոն կազմակերպությանը հանձնվում են՝

1) կնքվող պարկերով կամ կոնտեյներներով:

Բանկերում թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորները ինկասացիոն կազմակերպության միջոցով փոխադրելու համար ինկասատորների ներկայությամբ, արժեքներն ուղեկցող ցուցակի հետ միասին դրվում են պարկերի կամ կոնտեյներների մեջ և կնքվում առաքող բանկի կնիքով (կապարակնիքով) կամ մեկանգամյա օգտագործման կնիքով: Մինչև պարկերում ձուլակտորների տեղադրումը և պարկերի, կոնտեյներների կնքումը, ինկասատորները ստուգում են ձուլակտորների ամբողջականությունն ու անվնաս լինելը: Ձուլակտորների վնասված լինելու դեպքում կազմվում է ակտ, որի մեկ օրինակը արժեքներն ուղեկցող ցուցակի հետ միասին դրվում է կնքվող պարկում կամ կոնտեյներում:

2) Նախօրոք կնքված պարկերով կամ կոնտեյներներով՝ համաձայն պարկերի կամ կոնտեյներների վրա առկա վավերապայմանների: Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորները և բանկի պատասխանատու անձանց կողմից ստորագրված արժեքներն ուղեկցող ցուցակը մինչև ինկասատորներին հանձնելը պատասխանատու անձանց կողմից նախապես տեղադրվում են պարկերի, կոնտեյներների մեջ և կնքվում բանկի կնիքներով (կապարակնիքով) կամ մեկանգամյա օգտագործման կնիքով, որից հետո ձուլակտորները հանձնվում են ինկասատորներին:

13.5. Բանկերում ինկասացիոն կազմակերպությունից թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներն ընդունվում են սույն կանոնակարգի 13.4 կետում նշված հանձնման ձևերին համապատասխան:

Պարկերի, կոնտեյներների կամ դրանց կնիքների վնասված լինելու դեպքում կազմվում է ակտ, որը ստորագրվում է արժեքներն ընդունող բանկի նյութապատասխանատու անձանց և ինկասատորների կողմից, որից հետո թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորները ստուգվում են՝ համեմատելով արժեքներն ուղեկցող ցուցակի, իսկ ձուլակտորների վնասված լինելու վերաբերյալ ակտի առկայության դեպքում՝ նաև համապատասխան ակտի հետ: Պարկերի, կոնտեյներների կամ կնիքների ամբողջականության խախտման (վնասվածության) դեպքում կամ առանց նախնական ակտի առկայության ձուլակտորների վնասվածության, կամ ձուլակտորների և արժեքներն ուղեկցող ցուցակի անհամապատասխանության դեպքում կազմվում է ակտ թվարկված դեպքից յուրաքանչյուրի համար առանձին, որը ստորագրվում է ստացող բանկի պատասխանատու անձանց և ինկասատորների կողմից և հիմք է հանդիսանում առաքող, ստացող բանկերի և ինկասացիոն կազմակերպության պատասխանատվությունը պարզելու ու վնասը փոխհատուցելու համար:

13.6. Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների հանձնումն ինկասատորներին առաքող բանկում և ընդունումն ինկասատորներից ստացող բանկում ձևակերպվում են համապատասխանաբար առաքող և ստացող բանկերում սահմանված դրամարկղային գործառնությունների կարգին համապատասխան:

13.7. Բանկերի գլխամասերի միջև ինկասացիոն կազմակերպությունների միջոցով կանխիկ դրամը միմյանց առաքելու և միմյանցից ընդունելու ձևերի, ինչպես նաև հաշվեսխալների դեպքում կազմված ակտերի հիման վրա փոխադարձ վճարումների մասին կնքվում են պայմանագրեր:

13.8. Հաճախորդի կողմից ինկասացիոն կազմակերպությանը կանխիկ դրամի հանձնումը և ընդունումը իրականացվում է բանկի, հաճախորդի և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված եռակողմ պայմանագրերի դրույթների համաձայն, որոնք, սակայն, չպետք է հակասեն սույն կանոնակարգի պահանջներին:

Կանոն 14. Բանկերում կանխիկ դրամի փոխադրումների փաստաթղթային ձևակերպումները

14.1. Կանխիկ դրամի միջբանկային (միջմասնաճյուղային) փոխադրումներն իրականացվում են բանկի կողմից ինկասացիոն կազմակերպությանը տրված կարգագրերի հիման վրա, որոնք ստորագրված են բանկի այն պաշտոնատար անձանց կողմից, որոնց ստորագրությունների նմուշներն առկա են կանխիկ դրամը տրամադրող բանկում և վավերացված են բանկի կնիքով: Բանկը CBANet միջբանկային ցանցի միջոցով կարող է ինկասացիոն կազմակերպությանը ներկայացնել էլեկտրոնային կարգագիր:

14.2. Կարգագրերի ձևը սահմանվում է բանկի կողմից՝ համաձայնեցնելով ինկասացիոն կազմակերպության հետ և պահպանելով սույն կանոնակարգով սահմանված վավերապայմանները՝ համաձայն հավելված 7-ի: Էլեկտրոնային կարգագրի դեպքում օգտագործվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության տվյալ համակարգի տիպօրինակը, որում նույնպես պետք է պահպանված լինեն սույն կանոնակարգով սահմանված վավերապայմանները՝ համաձայն հավելված 8-ի:

14.3. Ինկասացիոն կազմակերպության կողմից կանխիկ դրամը բանկում ստանալու համար դրամարկղի պատասխանատու անձին ներկայացվում է տվյալ ավագ ինկասատորի անունով ինկասացիոն

կազմակերպության կողմից տրված լիազորագիրը՝ համաձայն հավելված 9-ի, իսկ եթե կարգագիրը ներկայացվում է թղթային տարբերակով, ապա նաև կարգագրի 1 օրինակը, որոնց հիման վրա կանխիկ դրամի ելքը ձևակերպվում է տվյալ բանկում սահմանված դրամարկղային գործառնությունների կարգին համապատասխան:

14.4. Ինկասացիոն կազմակերպությանը կանխիկ դրամի հանձնումը կատարվում է սույն կանոնակարգի 13.1 կետում նշված ձևով: Բանկում առաքվող կանխիկ դրամին կցվում է երեք օրինակից լրացված արժեքներին ուղեկցող ցուցակ՝ համաձայն հավելված 10-ի ստորագրված դրամարկղի պատասխանատու անձանց կողմից: Արժեքներին ուղեկցող ցուցակի առաջին օրինակը մնում է կանխիկ դրամն առաքող բանկում, երկրորդ օրինակը կանխիկ դրամի հետ միասին հանձնվում է ինկասատորներին: Արժեքներին ուղեկցող ցուցակի երրորդ օրինակը՝

1) համաձայն 13.1 «ա» կետի դրվում է կնքվող փոխադրման միավորների մեջ,
2) համաձայն 13.1 «բ» կետի արժեքների հետ միասին տրվում է ինկասատորներին՝ կանխիկ դրամն ստացող բանկին հանձնելու համար,
3) համաձայն 13.1 «գ» կետի դրվում է նախօրոք կնքված փոխադրման միավորների մեջ:

14.5. Արժեքները ստացող բանկում կանխիկ դրամն ինկասացիոն կազմակերպություններից ընդունվում է սույն կանոնակարգի 13.3 կետում նշված ձևով: Կանխիկ դրամի մուտքն իրականացվում է տվյալ բանկում սահմանված դրամարկղային գործառնությունների իրականացման կարգին համապատասխան: Կանխիկ դրամի ընդունումից հետո դրամարկղի պատասխանատու անձինք և ինկասատորները ստորագրում են արժեքներին ուղեկցող ցուցակի երկու օրինակների վրա, որոնցից մեկ օրինակը մնում է բանկում, իսկ մյուսը, հաստատված բանկի կնիքով, հանձնվում է ինկասացիոն կազմակերպությանը:

Կանոն 15. Բանկերի և հաճախորդների պատասխանատու անձանց ուղեկցումը կանխիկ դրամի փոխադրման ժամանակ

15.1. Բանկի լիազոր անձի միջոցով մեկ այլ բանկից փոխադրվող կանխիկ դրամը ստանալիս կամ այն մեկ այլ բանկ հանձնելիս բանկի լիազոր անձին (անձանց) կարող են ուղեկցել ինկասացիոն կազմակերպության աշխատակիցները: Ինկասացիոն կազմակերպության կողմից բանկի պատասխանատու անձին արժեքների հետ միասին ուղեկցելու գործառնությունը պետք է նախատեսված լինի բանկի և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված պայմանագրում, որտեղ հստակ պետք է նշված լինեն նաև արժեքների համար կողմերի պատասխանատվությունը և պարտականությունները:

15.2. Բանկի լիազոր անձանց ուղեկցելու համար ինկասատորները պարտավոր են տվյալ անձանց ներկայացնել ինկասատորների վկայականները և ինկասացիոն կազմակերպության կողմից ինկասատորներին տրված լիազորագիրն ու ներկայացման քարտը (հավելված 11):

15.3. Բանկի լիազոր պատասխանատու անձինք մեկ այլ բանկից կանխիկ դրամը ստանալուց հետո կամ այլ բանկին հանձնելուց առաջ դրանք տեղադրում են փոխադրման միավորի մեջ և կնքում: Կնքված փոխադրման միավորը տեղափոխման ընթացքում մնում է բանկի լիազոր պատասխանատու անձի տրամադրության տակ: Ուղեկցման վերջնակետին հասնելուց հետո փոխադրվող արժեքների փոխադրման միավորը ինկասատորների ուղեկցությամբ հանձնվում է ստացող բանկի լիազոր պատասխանատու անձանց:

15.4. Փոխադրվող կանխիկ դրամը նախատեսված վայր հասցնելուց հետո բանկի լիազորված պատասխանատու անձը ստորագրում է ինկասացիոն կազմակերպության կողմից ներկայացված քարտում:

15.5. Բանկերի հաճախորդների պատասխանատու անձանց ուղեկցումը կանխիկ դրամի փոխադրման ժամանակ կարգավորվում է հաճախորդի և ինկասացիոն կազմակերպության միջև կնքված պայմանագրերով:

Կանոն 16. Ինկասացիոն կազմակերպության պատասխանատվությամբ պահված կանխիկ դրամի հանձնումը բանկի դրամարկղ

16.1. Բանկի սահմանված աշխատանքային օրվա ավարտից հետո ինկասացված կանխիկ դրամը, եթե բանկը չունի երեկոյան դրամարկղ, կարող է պահվել ինկասացիոն կազմակերպությունում՝ վերջինիս պատասխանատվությամբ:

16.2. Ինկասացիոն կազմակերպության պատասխանատվությամբ պահված կանխիկ դրամը հաջորդ աշխատանքային օրը հանձնվում է բանկի դրամարկղ՝ սույն կանոնակարգի պահանջների և բանկի դրամարկղային գործառնությունների իրականացման կարգի դրույթների համաձայն:

Կանոն 17. Բանկերում դրամարկղային գործառնությունների իրականացումը

17.1. Բանկերում դրամարկղային գործառնություններն իրականացվում են բանկերի կողմից սահմանվող կարգերի պահանջներին համապատասխան: Բանկերի կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները սահմանող կարգերը չպետք է հակասեն սույն կանոնակարգի և Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին:

17.2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգերի մեկական օրինակները մեկամսյա ժամկետում, այդ թվում՝ փոփոխություններն ու լրացումները, տրամադրում են Կենտրոնական բանկին, իսկ նոր բացված բանկերն այդ կարգերի մեկական օրինակները Կենտրոնական բանկին են տրամադրում բանկային գործունեության լիցենզիա ստանալուց հետո եռամսյա ժամկետում:

Հավելված 1
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները»
կանոնակարգ 9-ի

Թղթադրամների վճարունակությունը որոշելու ցանցի տիպօրինակ*

* *Թղթադրամի վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցը տպագրվում է թղթի կամ թափանցիկ ժապավենի վրա՝ տվյալ անվանական արժեքի, տվյալ տարեթվի նմուշի թղթադրամի չափերով: Այն բաղկացած է 200 հավասարաչափ վանդակներից: Վնասված դրամանիշը տեղադրվում է ցանցի վրա, և թղթի վրա տպագրված ցանցի դեպքում շուրջը գծվում է՝ կրկնելով թղթադրամի վնասված եզրագիծը, իսկ թափանցիկ ժապավենի վրա տպագրված ցանցի դեպքում ընդհանուր պատկերը լուսածորվում կամ լուսանկարվում է: Շրջագծի երկարությամբ դասավորված վանդակների թվի կեսին ավելացվում է այդ շրջագծի ներսում ընկած վանդակների ընդհանուր քանակը, որից հետո ստացված արդյունքից հանվում է տասնորդական մասը: Դրամանիշը պետք է վճարունակ համարել այն դեպքում, երբ ստացված արդյունքը հավասար կամ մեծ է 120-ից:*

Թղթադրամների վճարունակությունը որոշող վանդակապատ ցանցերի չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ	
Անվանական արժեքը	**Չափերը (մմ)**	**Անվանական արժեքը**	**Չափերը (մմ)**
500 դրամ (1999 թ.)	129 x 72	10 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (1999 թ.)	136 x 72	25 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2001 թ.)	136 x 72	50 դրամ (1993 թ.)	125 x 62
1000 դրամ (2011 թ.)	136 x 72	50 դրամ (1998 թ.)	122 x 65
1000 դրամ (2015 թ.)	136 x 72	100 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (1999 թ.)	143 x 72	100 դրամ (1998 թ.)	122 x 65
5000 դրամ (2003 թ.)	143 x 72	200 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2009 թ.)	143 x 72	500 դրամ (1993 թ.)	135 x 65
5000 դրամ (2012 թ.)	143 x 72	1000 դրամ (1994 թ.)	145 x 68
10000 դրամ (2003 թ.)	150 X 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
10000 դրամ (2006 թ.)	150 X 72	5000 դրամ (1995 թ.)	145 x 71
10000 դրամ (2008 թ.)	150 X 72		
10000 դրամ (2012 թ.)	150 X 72		
20000 դրամ (1999 թ.)	150 x 72		
20000 դրամ (2007 թ.)	155 x 72		
20000 դրամ (2009 թ.)	155 x 72		
20000 դրամ (2012 թ.)	155 x 72		
50000 դրամ (2001 թ.)	160 x 79		
100000 դրամ (2009 թ.)	160 x 72		

Հավելված 2
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Ակտ
անվճարունակ դրամանիշի հայտնաբերման վերաբերյալ

__ _____ 20__ թ. թիվ _____

Սույն ակտը կազմված է _____
(առևտրային բանկի (մասնաճյուղում հայտնաբերելու դեպքում մասնաճյուղի) անվանումը)

առ այն, որ գանձապահ _____ կողմից հայտնաբերվել է
(գանձապահի անունը, ազգանունը, հայրանունը)

անվճարունակ դրամանիշ՝ հանձնված _____ կողմից:
(հաճախորդի անունը/անվանումը կամ գանձապահի անունը, ազգանունը)

Անվանական արժեքը, համարանիշը
_____
(անվանական արժեքը թվերով և բառերով)

Հաճախորդ _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

Գանձապահ _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

Պատասխանատու աշխատակից _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

Դրամարկղային հանգույցի ղեկավար _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

☐ Հաճախորդը ստորագրությունից հրաժարվել է

ամսաթիվ

__ _____ 20__ թ.

Հավելված 3
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Ակտ
կեղծ դրամանիշի հայտնաբերման վերաբերյալ
__ _____ 20__ թ. թիվ _____

Սույն ակտը կազմված է _____
(առևտրային բանկի (մասնաճյուղում հայտնաբերելու դեպքում մասնաճյուղի) անվանումը)

առ այն, որ գանձապահ _____ կողմից հայտնաբերվել է
(գանձապահի անունը, ազգանունը, հայրանունը)

կեղծ դրամանիշ՝ հանձնված _____ կողմից:
(հաճախորդի անունը/անվանումը կամ գանձապահի անունը, ազգանունը)

Անվանական արժեքը, համարանիշը _____
(անվանական արժեքը թվերով և բառերով)

Հաճախորդ _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

Գանձապահ _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

Պատասխանատու աշխատակից _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

Դրամարկղային հանգույցի ղեկավար _____ _____
(ստորագրություն) *(անունը, ազգանունը)*

☐ Հաճախորդը ստորագրությունից հրաժարվել է

ամսաթիվ

__ _____ 20__ թ.

Հավելված 4
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Բանկերից առաքվող կասկածելի դրամանիշերի ուղեկցող ցուցակ

__ _____ 20__ թ.

Առաքող բանկը _____

Ստացողը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Առաքում ենք կասկածելի դրամանիշեր կնքված ծրարով ավագ հնկասատոր _____ միջոցով:

Դրամանիշերի անվանական արժեքը	Գումարը (ՀՀ դրամ)	Կտորների դեպքում կտորների քանակը	Համարանիշը (եթե այն պահպանվել է)	Դրամանիշերը հանձնող անձի (եթե առկա է)	
				անունը, ազգանունը	անձնագրի տվյալները, հասցեն
Ընդամենը					

Դրամարկղի պատասխանատու՝ *Հնկասատորներ՝*

Աշխատակիցների ստորագրությունները

Դրոշմակնիքի տեղը՝

ՍՏԱՑԱԳԻՐ

__ _____ 20__ թ. ցուցակում նշված արժեքները, որոնք առաքվել են փակ պարկերով, կապոցներով, կոնտեյներներով՝ ավագ հնկասատոր _____
(ընդգծել)
_____ միջոցով՝ _____
(գումարը՝ թվերով և բառերով)
դրամ ընդհանուր գումարով ստացանք:

Արժեքների ընդունումը կատարվել է՝ ստուգելով _____
_____
_____

Արժեքներն ընդունեցին Արժեքները հանձնեցին

Գանձապահ՝ *Հնկասատորներ՝*

Հսկիչ՝

Հավելված 5
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

__ _____ 20__ թ.

ՀՀ կենտրոնական բանկ
_____
_____
(դիմողի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հասցեն, հեռախոսը)

Վճարունակության մեջ կասկած հարուցող դրամանիշերի փորձաքննության հանձնման

Դ Ի Մ Ու Մ

Խնդրում եմ փորձաքննության ընդունել կից ներկայացվող դրամանիշերը _____ դրամ/_____ կտոր* ընդհանուր գումարով _____ (գումարը տառերով), որից՝

Անվանական արժեքը	Քանակը (հատերով)	Կտորների դեպքում կտորների քանակը	Համարանիշը (եթե այն պահպանվել է)
Ընդամենը			

Դրամանիշերի վնասման պատճառը _____

Դիմող՝ _____
(ստորագրություն)

Տրամադրվել է անդորրագիր թիվ _____

** Կտորների դեպքում ընդհանուր գումարը կարող է չնշվել:*

_____
ՀՀ կենտրոնական բանկ

ԱՆԴՈՐՐԱԳԻՐ ԹԻՎ ____

Քաղաքացի _____-ից ՀՀ կենտրոնական բանկ փորձաքննության են ընդունվել ____ հատ դրամանիշեր _____ դրամ ընդհանուր գումարով, որից՝
(գումարը տառերով)

Անվանական արժեքը	Քանակը (հատերով)	Կտորների դեպքում կտորների քանակը	Համարանիշը (եթե այն պահպանվել է)
Ընդամենը			

_____
(Դրամանիշերն ընդունողի անուն, ազգանունը)

_____
(Դրամանիշերն ընդունողի ստորագրությունը)

Փորձաքննության արդյունքները կտրամադրվեն 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 աշխատանքային օր:

Հակադարձ կողմը

1. Անվճարունակ և կեղծ ճանաչված դրամանիշերը չեն փոխանակվում և հաճախորդին չեն վերադարձվում:
2. Դրամանիշերը փորձաքննության ընդունման վերաբերյալ անդորրագիրը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց Կենտրոնական բանկի գիտության: Հաճախորդը փոխանակման ենթակա դրամանիշերի գումարը ստանալիս անդորրագիրը պետք է վերադարձնի բանկին:
3. Գումարը ստանալուց ներկայանալ անձնագրով:

Հավելված 6
«Հայաստանի Հանրապետության դրամանիշերի վճարունակության, հնամաշության հատկանիշները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ի

Թղթադրամների արմատների փաթեթաթղթերի, կապոցների վրադիրների գույները և արմատների փաթեթաթղթերի չափերը

Դրամանիշերն ըստ անվանական արժեքների	Վրադիրի և փաթեթաթղթի գույները	Լայնությունը (մմ)	Երկարությունը (մմ)	Մեկ գծի լայնությունը (մմ)	Գծերի քանակը (հատ)
10 դ.	դարչնագույն	45	220	4	1
25 դ.	կարմիր	45	220	4	1
50 դ.	կապույտ	45	230	4	1
100 դ.	դարչնագույն	45	230	4	2
200 դ.	կարմիր	45	240	4	2
500 դ.	կանաչ	45	240	4	2
1000 դ.	դարչնագույն	50	260	4	3
5000 դ.	սև	50	260	4	1
10000 դ.	կապույտ	57	290	10	2
20000 դ.	նարնջագույն	55	260	10	1
50000 դ.	մանուշակագույն	57	290	10	1
100000 դ.	կանաչ	57	260	10	1

Թղթադրամների կապոցների վրադիրների չափերը

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ		**Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներ**	
Անվանական արժեքը	Չափերը (մմ)	Անվանական արժեքը	Չափերը (մմ)
